ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Բյուջեում նախատեսվող փոփոխությունների

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի ժ/պ Վ. Խաչատրյանի 2024 թվականին մարտի 4-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է ֆոնդային բյուջեի 04.5.1 ծրագիր 5113 հոդվածից՝

1. 3000000 ՀՀ դրամ տեղափոխել 08.2.7 ծրագիր 5113 հոդված՝ Սիսիան համայնքի պանթեոնում հուղարկավորված Արման Ռուբիկի Բաբաջանյանի և Անդրանիկ Վաչագանի Պետրոսյանի շիրմաքարերի տեղադրման համար:

Հիմք ընդունելով Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի ժ/պ Վ. Խաչատրյանի 2024 թվականին մարտի 5-ի զեկուցագիրը և համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի 06.3.1 ծրագիր 4251 հոդվածից՝

1. 18030000 ՀՀ դրամ տեղափոխել 01.6.1 ծրագիր 4241 հոդված՝ Սիսիան համայնքի թվով 16 բնակավայրերի խմելու ջրի քլորացման ծառայություններ ձեռքբերելու համար:

Հիմք ընդունելով նախկին Գորայք համայնքի աշխատակազմի քարտուղար Վարուժան Վարդանյանի գրությունը, 2021-2022 թվականներին նախագծա-նախահաշվային, փորձաքննության, տեխնիկական, հեղինակային հսկողության ծառայություններ իրականացրած Պռոշաբերդ Շին ՍՊԸ-ի, Մառա և Դուստրեր ՍՊԸ-ի, ԳՐԱՆԴ ԻՆՍՓԵՔՇՆ ՍՊԸ-ի կողմից դուրս գրված հաշիվ ապրանքագրերը, ներկայացված ակտ, արձանագրությունները, որոնք հաստատվել են Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության բաժնի ժ/պ Վ. Խաչատրյանի կողմից, ինչպես նաև համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է ֆոնդային բյուջեի 04.5.1 ծրագիր 5113 հոդվածից՝ սպորև ներկայացված ծրագրերին և հոդվածներին գումարներ պլանավորել, նախկին պարտքերը մարելու նպատակով

1. 214500 ՀՀ դրամ տեղափոխել 08.6.1 ծրագիր 5113 հոդված,
2. 324522 ՀՀ դրամ տեղափոխել 06.4.1 ծրագիր 5113 հոդված,
3. 348402 ՀՀ դրամ տեղափոխել 06.3.1 ծրագիր 5113 հոդված,
4. 90000 ՀՀ դրամ տեղափոխել 04.2.4 ծրագիր 5113 հոդված,
5. 100000 ՀՀ դրամ տեղափոխել 08.2.3 ծրագիր 5113 հոդված :

Հիմք ընդունելով 2024 թվականի մարտի 6-ի <<Սյունյաց աշխարհ>> ՍՊԸ-ի կողմից Սիսիան համայնքի ղեկավար Արմեն Հակոբջանյանին ուղված գրությունը և 2024 թվականի մարտի 11-ի Կրթության , մշակույթի, սպորտի, երիտասարդության, առողջապահության և սոցիալական հարցերի բաժնի պետ Նարա Հովհաննիսյանի զեկուցագիրը, համայնքի ղեկավարի առաջարկը ավագանու որոշման նախագծով առաջարկվում է վարչական բյուջեի պահուստրայի ֆոնդի 11.1.2 ծրագիր 4891 հոդվածից՝

1. 300000 ՀՀ դրամ տեղափոխել 08.6.1 ծրագիր 4637 հոդված՝ որը կուղղվի Համո Սահյանի ծննդյան 110-ամյակի նվիրված հատուկ համարի հրատարակման մի մասի ֆինանսավորման համար:

Ավագանու որոշման նախագծով առաջարկվում հետևյալ գումարների պլանավորումը համայնքի բյուջեի եկամտային և ծախսային մասերում.

Սիսիան համայնքի Աղիտու և Վաղատին բնակավայրերի խմելու ջրի ներքին ցանցի կապիտալ վերանորոգման աշխատանքների համար, պետության մասնաբաժինը վճարելու նպատակով նախատեսվում է 06.3.1 ծրագիր 5113 հոդվածում ավելացնել 238554405.05 (երկու հարյուր երեսունութ միլիոն հինգ հարյուր հիսունչորս հազար չորս հարյուր հինգ ամբողջ հինգ հարյուրերորդական) ՀՀ դրամ, որն տրամադրվում է պետության կողմից և պլանավորվում է նաև ֆոնդային բյուջեի /ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ (ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ)/ եկամտային մասում:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ **Դ. Այվազյան**

14.03.2024թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն նախագծի ընդունումից հետո համայնքի բյուջեի եկամուտներն ու ծախսերը կավելանան 238554405.05 (երկու հարյուր երեսունութ միլիոն հինգ հարյուր հիսունչորս հազար չորս հարյուր հինգ ամբողջ հինգ հարյուրերորդական) ՀՀ դրամով:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ **Դ. Այվազյան**

14.03.2024թ.